ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, հեռ. 010-596-125

№ 12/13 «10» 01 2025 թ.

«ՔԱՆԱՆ ԸՆԴ ՅԱՆ» ՍՊԸ
(ՀՎՀՀ 00522734)
ՀՀ ք. Երևան, Նար-Դոս 77/70
էլ. հասցե՝ kananyan01@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

ՀՀ ՆԳՆ և «ՔԱՆԱՆ ԸՆԴ ՅԱՆ» ՍՊԸ-ի միջև 10.04.2024թ. կնքված ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2024ԳՈՒՅՔ/2-2 ծածկագրով պայմանագրի և 02.10.2024թ. թիվ 1 համաձայնագրի շրջանակներում «ՔԱՆԱՆ ԸՆԴ ՅԱՆ» ՍՊԸ–ն Պայմանագրի թիվ 2 և 3 չափաբաժինների մասով հրաժարվել է ապրանքները մատակարարել:

«ՔԱՆԱՆ ԸՆԴ ՅԱՆ» ՍՊԸ-ի կողմից մինչ օրս չի մատակարարվել ապրանքատեսակը և չի կատարվել պայմանագրային պարտականությունները, խախտվել է Պայմանագրի 2.1.1 կետը, որը սահմանում է, որ «Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավել»:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 4-րդ ենթակետի՝ պայմանագիր կնքած անձի (կատարողի) ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0,5 տոկոսից, իսկ տույժերի չափը՝ 0,05 տոկոսից: Եթե գնման ընթացակարգը կազմակերպվել է չափաբաժիններով, և ընտրված մասնակցի հետ կնքված պայմանագիրը ներառում է մեկից ավելի չափաբաժիններ, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

Պատասխանատու ստորաբաժանման կողմից հաշվարկվել է երկարաթև վերնաշապիկ չմատակարարված քանակի համար յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար 0.05% (զրո ամբողջ զրո հինգ հարյուրերորդական) չափով տույժ՝ 300000*0.05%*13 օր =1950 ՀՀ դրամ(հազար ինն հարյուր հիսուն) և 0.5% (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) չափով տուգանք՝ 1500 (հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

Համաձայն Պայմանագրի 2.1.7-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը: Մատակարարի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ մատակարարված ապրանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին կամ/և մատակարարը խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.11-րդ կետը՝ ՀՀ ՆԳՆ-ն միակողմանի լուծում է ՀՀ ՆԳՆ և «ՔԱՆԱՆ ԸՆԴ ՅԱՆ» ՍՊԸ-ի միջև կնքված թիվ ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ԳՈՒՅՔ/2024/2-2 ծածկագրով Պայմանագիրը: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

«ՔԱՆԱՆ ԸՆԴ ՅԱՆ» ՍՊԸ-ին տրվում է 5 օրացուցային օր սահմանված տույժը և տուգանքը ՀՀ ՖՆ գործառնական վարչության 900005028106 հաշվեհամարին վճարելու համար, ինչպես նաև տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից որպես որակավորման ապահովման գումար 45 000 ՀՀ դրամ և պայմանագրի ապահովման գումար 30 000 ՀՀ դրամ փոխանցել ՀՀ ՖՆ գործառնական վարչության համապատասխանաբար N900008000664 և N900008000698 հաշվեհամարներին: Վճարման կտրոնների բնօրինակներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ՆԳՆ, ք. Երևան Նալբանդյան 130 հասցեով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, «ՔԱՆԱՆ ԸՆԴ ՅԱՆ» ՍՊԸ-ի տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմին:

Ա. ՖԻԴԱՆՅԱՆ

<< 10 >> 08 2024թ.

ք.Երևան

Կատարող՝ Հ. Ասատրյան
Հեռ. 010-59-66-32